ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (*ԽՍ-298-26.09.2019-ՏՀ-011/0*) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

ՀՀ	*Առաջարկի հեղինակը*	*Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկը*	*Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)*	*Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը*	*Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը*
1	***2***	***3***	***4***	***5***	***6***
1.	<< Լուսավոր Հայաստան>> խմբակցություն	Վերաբերում է նախագծի 1-ին հոդվածին	Նախագծի 1-ին հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Հայաստանի Հանրապետության 2016 թվականի հոկտեմբերի 04-ի հարկային օրենսգրքի 147-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 4.1-ին կետով. «4.1. բանկերի կամ վարկային կազմակերպությունների միջոցով ստացված գումարները, որոնք բանկերը կամ վարկային կազմակերպություններն ստացել են որպես ապահովագրական հատուցում, որոնց մասով բանկը կամ վարկային կազմակերպությունը հանդիսանում է շահառու, իսկ ֆիզիկական անձը՝ ապահովադիր (այդ թվում, եթե գումարները բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից անմիջապես ուղղվում են ֆիզիկական անձի վարկի մարմանը, որի մասով առկա է ապահովագրության պայմանագիր).»:	Ընդունվել է, կատարվել է փոփոխություն	Ընդունվել է